«*Նոր ժամանակի կրթություն*» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտական թեման՝ *Սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում*

Առարկան՝ *Մայրենի*

Հետազոտող ուսուցիչ՝ *Սուսաննա Մուրադյան*

Ուսումնական հաստատություն՝ *Խաչատուր Աբովյանի անվան թիվ 84 հիմնական դպրոց*

Հետազոտական աշխատանք

Թեմա- Սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում

Ինչի՞ մասին ես ուզում սովորել- Որո՞նք են սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը առանձնահատկությունները առարկայի դասավանդման ընթացքում:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը- Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Վհա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով շափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես անգնահատելի է լեզվի և գրականության դերը:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին- Մարդու իրավունքների հիմնարար սկզբունք լինելուց զատ՝ այն նաև փիլիսոփայական և բարոյագիտական հասկացություն է: Իբրև այդիպիսին այն ընկալվում է որպես մարդու հատուկ բարոյական վերաբերմունքը ինքն իր հանդեպ և նրա հանդեպ հասարակության վերաբերմունքը, որտեղ ընդունվում է անձնավորության արժեքը: Մի կողմից, մարդու՝ սեփական արժանապատավության գիտակցումը անձնավորության ինքնագիտակցման և ինքնավերահսկման ձևն է, նրա վրա է հիմնվում ինքն իր հանդեպ մարդու պահանջկոտությունը: Իր արժանապատվության հաստատումը և պաշտպանումը ենթադրում է նրան համապատասխանող բարոյական արարքների կատարում (կամ, ընդհակառակը, թույլ չի տալիս մարդուն վարվելու իր արժանապատվությունից ցածր): Այս իմաստով սեփական արժանապատվության ըմբռնումը, խղճի և պատվի հետ միասին, հանդիսանում է մարդու՝ ինքն իր առջև որպես պատասխանատվության գիտակցման եղանակներից մեկը: Մյուս կողմից, անձի արժանապատվությունը պահանջում է նաև մյուս մարդկանցից՝ հարգել անհատին, ճանաչել մարդու համապատասխան իրավունքներն ու հնարավորությունները, նրան ներկայացվող բարձր պահանջկոտությունը: Այստեղ տեղին է նշել էթիկայի Ոսկե կանոնը.

«Դիմացինիդ հետ վարվիր այնպես, ինչպես կցանկանայիր, որ քեզ հետ վարվեին»

Խաչվող հասկացությունները՝

- Դասիարակություն և կրթություն
- ազգային գիտակցություն և համամարդկային արժեքներ:

Հետազոտության թեմային առնչվող բնագավառները՝

1. Կրթական միջավայր
2. Հոգեբանություն:

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Երեխաների կրթության մասին խոսելիս մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասածը: Արժեքը երևույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել: Վճարի «արժույթը» կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք և այլն:

Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների և հաղթահարումների ապրելը երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման: Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում: Նորմերը տարբեր են քաղաքում և գյուղում: Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, և որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձևավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի:

Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր: Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ: Կհա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում: Հիմա անդրադառնանք բարոյականությանը: Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը և չի հակասում դրանց:

Անբարոյական է այն ամենը, ինչը դեմ է արժեքներին և բերում է դրանց քայքայման: Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը: Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի

մղձավանջի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը: Հենց դրանով է վտանգավոր, օրինակ, կոռուպցիան, քանի որ այն դավաճանություն է հանրությանը տված խոստմանը: Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը և տարածվում անբարոյականությունը:

Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը եւ գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել:

Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար. նա պետք է զգա և՛ ցավ, և՛ ուուրախություն, ունենա թե՛ դժվարություններ, թե՛ հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենաիմաստալից կրթական համակարգը: Եվ ամենից հաճախ այդ սպառողը դեռահասն է, ով չունի կայացած արժեհամակարգ, սոցիալական վարքի կարգավորման մեխանիզմներ, առավել հակված է ընդօրինակելու շրջապատին:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և բացահայտել սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պահպանման հնարավորությունը առարկայի դասավանդման շրջանակներում:

Հետազոտության խնդիրներն են՝

- Ուսումնասիրել արժեքային համակարգի էությունը,
- Բացահայտել սովորողների իրավունքների պահպանության զարգացման հիմքերը
- Ներկայացնել սովորողների արժեքային համակարգի վրա ազդող ավանդական և ժամանակակից մեթոդները և գործոնները:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական նյութից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում

Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

. Սովորողն իրավունք ունի՝

1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.

2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.

3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից.

4) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների.

5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.

6) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.

7) ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

9) օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3. Սովորողը պարտավոր է՝

1) կատարել ուսումնական հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.

2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների և կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները.

3) հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին.

4) կատարել օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:[1]

«Հասարակագիտություն» առարկայի նպատակն է ձևավորել հիմնարար արժեքներ կրող, հուզական հասունություն դրսևորող, կշռադատող, մարդու և հասարակության հիմնահարցերը գիտականորեն ընկալող, հեռազոտող և մեկնաբանող, ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների տիրապետող, ազգային և համամարդկային հիմնախնդիրներին իրազեկ, ազգային ու համամարդկային արժեքներ կրող, ժողովրդավարական և կայուն զարգացման արժեհամակարգով առաջնորդվող, սոցիալապես ակտիվ և պատասխանատու քաղաքացի:Առարկայի դասավանդման շրջանակներում կարևորագույն խնդիր է սովորողների իրավունքների և ազատությունների պահպանմանն ուղղված հստակ գործողությունների կազմակերպումը,սովորողների՝որպես ուսումնական գործընթացի սուբյեկտների ներգրավումը այդ գործընթացում:

«Հասարակագիտություն» առարկան բաղկացած է Սոցիոլոգիա,Հոգեբանություն, Իրավագիտություն, Տնտեսագիտություն, Քաղաքագիտություն, Փիլիսոփայություն գիտակարգերից:Սրանց ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռում սովորողին հասարակական երևույթներն ընկալել բազմակողմանիորեն և ինտեգրված եղանակով,ինչը բխում է ժամանակակից մանկավարժահոգեբանական հայեցակարգերի պահանջներից:Հասարակագիտության ուսումնասիրման առարկան տարողունակ է և բազմազան են դրա առջև դրված խնդիրները,ուստի ուսումնասիրելով հասարակագիտության ուսումնասիրման շրջանակին վերաբերող հարցերը՝ սովորողը հնարավորություն է ստանում հասարակական երևույթներն ընկալել բազմակողմանիորեն և ինտեգրված եղանակով:Սովորողը հնարավորություն է ստանում բացահայտելու և հիմնավորելու անձի առանձնահատկությունները և հասարակական կյանքի օրինաչափությունները:Սովորողներին հասկանալի են դառնում ժամանակակից մարտահրավերներին արդյունավետ դիմակայող հասարակությանը բնորոշ հատկանիշները:

Հասարակագիտություն առարկայի արդիականությունը հիմնվում է ուսուցման երեք բաղադրիչների վրա՝ իմացական, սոցիալական և անձնային:

Իմացական (կոգնիտիվ) բաղադրիչ: ժամանակակից աշխարհում շափազանց կարևոր է հասարակական կյանքի օրինաչափությունների մասին գիտելիքներ ունենալը: Այդ գիտելիքների միջոցով մենք կարող ենք հասկանալ ու

[1] ՀՀ Հանրակրթության մասին օրենք,հոդված 20

բացատրել մեզ շրջապատող աշխարհը, կառուցել արտաքին աշխարհի մասին հիմնավոր ներքին պատկերացում: Հասարակական գործընթացների բազմազանությունը, տարբեր երևույթների մասին առկա տարակարծությունները կարևոր նախապայման են սովորողների մոտ քննադատական և ստեղծագործական մտածողություն զարգացնելու տեսանկյունից: Ժամանակակից աշխարհում էապես մեծացել են մարդկանց միջև առկա աշխարհայացքային տարբերությունները, ինչի արդյունքում հաճախ փորձում են մարդկանց ապակողմնորոշել, զրկել ինքնուրույն մտածելու հնարավորությունից: Այս խնդիրներին դիմակայելու համար կարևոր է, որպեսզի սովորողներն ունենան քննադատական մտածողություն: Վերջինս հնարավորություն է տալիս հասարակական երևույթները դիտարկել տարբեր կողմերից, կշռադատել դրանց դրական և բացասական ասպեկտների մասին և կայացնել հիմնավորված որոշումներ: Հասարակական գործընթացների բազմազանությունը նաև լավ հնարավորություն է ստեղծում դրսևորելու ոչ ստանդարտ մոտեցումներ և դրանով իսկ զարգացնելու սովորողների ստեղծագործական մտածողությունը: Այս առարկայի դասավանդման շրջանակում առաջնային է համարվում քաղաքացիական, իրավական, տնտեսական, մշակութային, մեդիա գրագիտության ձևավորումը, որոնք համարվում են բարեկեցիկ հասարակության հենասյուները:

«Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը հնարավորություն է տալիս սովորել մարդու մտածողության մասին և ձեռքբերած գիտելիքներն ու հմտությունները կիրառել կոնկրետ իրավիճակներում:Ուսուցչի կարևորագույն խնդիրն է դառնում սովորողների համար հասկանալի դարձնել հասարակական տարբեր երևույթների առաջացումն ու ընթացքը,սեր և հետաքրքրություն արթնացնել դեպի տարբեր երևույթներում առկա օրինաչափությունների բացահայտումը, գնահատումը, զարգացնել ու ձևավորել սեփական կարծիք ու որոշակի վերաբերմունք տեղի ունեցող զանազան երևույթների ու իրադարձությունների վերաբերյալ:Սովորողների իրավունքների ու ազատությունների պահպանումը դրսևորվում է այնտեղ,որտեղ մենք հնարավորություն ենք տալիս նրանց ձևավորելու իրենց հասարակական կարծիքն ու մտածողությունը,զգալու իրենց մասն այն հասարակության,որտեղ ապրում են իրենք,երբ մենք կարևորում ենք նրանց մոտեցումներն ու դիրքորոշումները,ուղղորդում դեպի նորի բացահայտումը:

Սոցիալական բաղադրիչ: Բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ ժամանակակից աշխարհում կարևորվում են սոցիալական այնպիսի հմտություններ, ինչպիսիք են հաղորդակցությունը, համագործակցությունը, դիմացինին հասկանալու կարողությունը, կոնֆլիկտներ լուծելու

հմտությունը: Շատ կարևոր են այնպիսի որակների զարգացումը, ինչպիսիք են սոցիալական համերաշխությունը, սոցիալական պատասխանատվությունը, սոցիալական ձեռներեցությունը, մասնակցությունը: «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը հնարավորություն է տալիս գիտելիքներ և հմտություններ ձեռք բերել սոցիալական հմտությունների մասին և դրանք կիրառել հասարակական տարբեր երևույթներ բացատրելու գործընթացում:Հետևապես առարկայի դասավանդման ընթացքում պետք է ստեղծվեն համապատասխան պայմանները, որոնց շնորհիվ սովորողները,ծանոթանալով իրենց շրջապատող հասարակությանն ու գիտակցելով այդ հասարակությունում իրենց դերը,իրենց իրավունքներն ու պարտականությունները կվերագինահատեն ու կվերլուծեն և որ ամենակարևորն է՝ կզգան դրանց պաշտպանվածությունն ու գնահատումն ուսուցչի կողմից :

Անձնային զարգացման բաղադրիչ: Հասարակությունների զարգացման մակարդակը մեծապես կախված է այն բանից, թե ինչպիսի անձնային որակներ ունեն տվյալ հասարակության անդամները, որքանով են առաջնորդվում ամբողջ կյանքի ընթացքում սովորելու պահանջով: Այս առումով կարևոր են անձի հուզական հասունությունը, ինքնաճանաչողության, ինքնագնահատման բարձր հմտությունները: Անձի ձևավորման գործում էական նշանակություն ունեն այնպիսի արժեքներ կրելը, ինչպիսիք են՝ ազատությունը, արդարությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, արժանապատվությունը: Հենց այդ արժեքների վրա հիմնվող անձը կարող է դրսևորել պատասխանատու վարքագիծ՝ գիտակցելով իր քայլերի կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքները:

Մեր առջև հսկայական խնդիր է դրվում առարկայի դասավանդման շրջանակներում ձևավորել կայուն արժեքային համակարգ,գնահատել ու խրախուսել աշակերտի ինքնուրույն ստեղծագործական-որոնողական աշխատանքը,խրախուսել ու գնահատել աշակերտի հասարակական դրական վարքագիծն ու նպաստել հասարակական համապատասխան վարքի ձևավորմանը: Արժեքների վրա հիմնվող անձնային զարգացումը «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման հիմնական նպատակներից մեկն է: «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը մեծ դեր ունի դպրոցի քաղաքացիական կրթության առաքելության իրականացման գործում:

«Հասարագիտություն» առարկայի «Իրավագիտություն» բաղադրիչի նպատակը իրավագիտակցության բարձր մակարդակ ունեցող քաղաքացու ձևավորումն է: Իրավագիտակցությունը, լինելով հասարակական գիտակցության ձևերից մեկը, մարդկանց, նրանց միավորումների, ամբողջ հասարակության հայացքների,

գաղափարների, պատկերացումների ամբողջությունն է իրավունքի և իրավական երևույթների վերաբերյալ: Իրավագիտակցությունը հսկայական դեր է խաղում հասարակական կյանքում, որը դրսևորվում է հետևյալ հիմնական գործառույթներով՝ ճանաչողական, գնահատիչ, կարգավորիչ: Իրավագիտակցությունը նպաստում է իրավունքի ուսումնասիրությանը, ուստի և նրա իմացությանը: Գնահատելով իրավունքը, դրա դրական և բացասական ազդեցությունը, իրավագիտակցությունը ձևավորում է որոշակի վերաբերմունք իրավունքի նկատմամբ: Հենց այդ իրավունքի նկատմամբ որոշակի վերաբերմունքի ձևավորումն էլ դառնում է կարևոր նախապայման ու հիմք՝ իրավական գիտակցություն ունեցող անձի ձևավորման համար:Մեր առջև գլխավոր խնդիր է դրվում աշակերտներին ծանոթացնել իրենց իրավունքներին որպես քաղաքացիների,որպես անձանց,ովքեր ապրում են տվյալ հասարակությունում,հարգել իրենց իրավունքներն ու ազատությունները և նույնը սովորեցնել իրենց: Այսինքն մեր ճիշտ դիրքորոշումից է կախված այնպիսիս քաղաքացիների ձևավորումը,որոնք ունակ կլինեն գիտակցելու սեփական իրավունքների ու ազատությունների սահմանը,ճանաչելու ու հարգելու նաև մյուսների իրավուքներն ու պարտականությունները:Աշակերտները,ունենալով բարձր իրավագիտակցություն, կտիրապետեն իրենց հիմնական իրավունքներին ու պարտականություններին և, հարկ եղած դեպքերում, կկարողանան իրացնել իրենց իրավունքները ու ընդհանրապես, ավելի բարեխոհորեն կբերաբերվեն իրենց պարտականությունների կատարմանը:Այս ամենի համար կարևոր են առարկայի դասավանդման ընթացքում մատուցվող գիտելիքներն առաջին հերթին: Առարկան պետք է ներառի գիտելիքներ՝

- Հայաստանի Հանրապետության հասարակական կյանքի քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգևոր-մշակութային ոլորտների մասին.
- Մարդու հիմնարար իրավունքների, ազատությունների ու քաղաքացիական հասարակության մասին.
- Հասարակական վարքի նորմերի, կանոնների, սովորողների իրավունքների ու պարտականությունների մասին.
- Հասարակական և բնական երևույթների փոխկախվածության, աշխարհի միասնա-կանության և բազմազանության մասին:

Հասարակագիտության ուսուցումը պետք է ուղղված լինի սովորողների հետևյալ կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը՝

- Վերլուծել, համեմատել, ընդհանրացնել, վերացարկել և համադրել հասարակական կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող հիմնախնդիրներ, իրադարձություններ, երևույթներ և փաստեր.
- Տարբեր սկզբնաղբյուրներից տեղեկատվություն ընտրել, վերլուծել, եզրակացություններ անել և համապատասխան հղումներ կատարել
- Աշխատել քիմերով, համագործակցել և կարողանալ ներկայացնել ստացած գիտելիքը և կատարած աշխատանքը,
- Հանրային կյանքի տարբեր ոլորտներում կիրառել հաղորդակցվելու համարժեք ձևեր.
- Կապել կյանքը և ուսումնառությունը՝ համայնքային հիմնախնդիրների ուսումնասիրման միջոցով
- Ձևավորել փոխադարձ հարգանքի և փոխօգնության հարաբերություններ մարդկանց հետ առօրյա շփումներում.
- Հասկանալ և գնահատել իր հասարակական դերը՝ որպես որոշակի ժամանակաշրջանում և որոշակի տարածության մեջ ապրող քաղաքացի.
- Տարբերակել իրավունքի հետ առնչվող խնդիրները, հասկանալ դրանց իրավական ու ոչ իրավական լուծումների տարբերությունը, յուրացնել ու գնահատել օրենքների և օրինականության նշանակությունը, իրավագիտակից, օրինապաշտ և ակտիվ քաղաքացիներ դառնալու համար.
- Արտահայտել սեփական կարծիքը և այն պաշտպանել հասարակագիտական խնդիրների շուրջ կազմակերպված քննարկումների և բանավեճերի ընթացքում.
- Առաջնորդվել հանդուրժողականության սկզբունքներով.
- Փնտրել, գտնել և կիրառել ինքնուրույն, այլընտրանքային լուծումներ սոցիալական և հոգեբանական տարբեր իրավիճակներում.
- Դրսևորել ստեղծագործական մտածելակերպ.
- Ունենալ գործուն քաղաքացիական դիրքորոշում և գործնականում կիրառել ժողովրդավարության սկզբունքները:

«Հասարակագիտություն» առարկան ընձեռում է մեզ լայն հնարավորություններ քննադատական մտածողությամբ առաջնորդվող, իր տեղն ու դերը գիտակցող, իր իրավունքներն ու պարտակաբնությունները ճանաչող ու հասարակական գիտակցություն ունեցող անձի ձևավորման համար: Ուսուցչի պատասխանատու

վերաբերմունքի շնորհիվ միայն սա իրականություն կարող է դառնալ: Ուսուցիչը,եթե ուզում է ձևավորել հենց այսպիսի արժեքներ կրող քաղաքացի,նախ ինքը պիտի կրի այս արժեքները,ինքը պիտի դառնա աշակերտի լավագույն օրինակն ու էտալոնը: Մեծ կարևորություն ունի ուսուցչի ստեղծագործական մոտեցումը յուրաքանչյուր խնդրին: Ուսուցման գործընթացում՝ կախված թեմայից, դասի նպատակից, դասարանից, քննարկվող հիմնախնդրի և սովորողների առանձնահատկություններից, առկա հնարավորություններից ու այլ հանգամանքներից, տվյալ դասի կամ դասի հատվածի համար ըստ նպատակահարմարության կարող են ընտրվել ուսումնական գործունեության տարբեր տեսակներ,ինչպիսիք են՝ինքնավերլուծություն, զրույցներ ու հարցազրույցներ շրջապատող մարդկանց տարբեր խմբերի հետ, սկզբնաղբյուրների հետ աշխատանք, հիմնախնդիրների հետազոտում, մտքերի տարափ, դերային խաղեր, բանավեճեր, անհատական ու խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում, նախագծերի իրականացում, հանրօգուտ աշխատանքների, ծրագրերի իրականացում, համայնքային հիմնախնդիրների հետազոտում և այլն:

«Հասարակագիտություն» առարկան սովորողին հասարակական գործընթացներն ուսումնասիրելու, դրանց մասին քննադատական մոտեցում ձևավորելու և սեփական դիրքորոշում ունենալու հնարավորություն է տալիս: Սովորողը պետք է կարողանա գիտականորեն ընկալել մարդու և հասարակության հիմնահարցերը, քաղաքական կարգերն ու գաղափարները, կայուն զարգացման հակասությունները, հետազոտել և մեկնաբանել դրանք, տիրապետել ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների, իրազեկ լինել տեղական, ազգային և համաշխարհային հիմնախնդիրներին՝ հենվելով ազգային ու համամարդկային արժեքների վրա: Գաղափարական նման մոտեցումը միտված զարգացնել սովորողի միտքը, խթանել վերլուծական և քննադատական մտածողությունը: Ժողովրդավարությանը ձգտող հասարակություններում կրթությունը պետք է միտված լինի տալ գիտելիք, հմտություն և փորձառություն, որոնք էլ իրենց հերթին միտված են տարածել ժողովրդավարական արժեքներ:

Ըստ այդմ՝ անհրաժեշտ է ստեղծել կրթական միջավայր, որը կամրապնդի սովորողի՝ իր ուժերի նկատմամբ հավատը՝ միևնույն ժամանակ անհատներին հնարավորություն տալով ազատորեն արտահայտել իրենց կարծիքը: Հասարակության և անհատի միջև հավասարակշռությունը պետք է հաստատվի անհատի համար ապահով միջավայրում, որտեղ գոյություն ունեն

հնարավորություններ զարգացնել «ես», «նա» և «մենք» գաղափարները: Սա էլ կուղղորդի միջանձնային հարաբերությունների զարգացմանը և անհատների միջև համագործակցության խթանմանը:Դպրոցական շրջանավարտը պետք է հարմարվի կյանքի փոփոխվող իրավիճակներին, ինքնուրույն մտածի քննադատաբար, լինի շփվող տարբեր հարցերում: Դպրոցը պետք է պայմաններ ստեղծի աշակերտների մոտ ժամանակակից առանցքային իրավասությունների ձևավորման համար՝ ընդհանուր գիտական, տեղեկատվական, ճանաչողական, հաղորդակցական:

Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:

Ընդ որում՝ կրթական տարբեր ասպիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում:

Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ

արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին:

Վվանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»[2]:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքային է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի ատիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»[3]:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական:

Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների

---

[2] Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., էջ 22
[3] Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., էջ 64

դասիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

Եզրակացություն

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադասիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դասիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:

Ուսուցման գործընթացի դասիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դասիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք:

Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները, մասնավորապես՝ նկատի ունենք ռուսաց լեզուն, որով ստեղծված համաշխարհային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դասիարակելու հսկայական ներուժ: Կհա թե ինչու հանրակրթական դպրոցում ռուսաց լեզվի և գրականության դասավանդումը դուրս է գալիս սոսկ օտար լեզու և օտար մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել:

Օգտագործված գրականության ցանկ

1. Իլյինսկի Ի., Ռուսասանի կրթության «արդիականացումը» Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ.,
2. Զեյնալյան Ն. Ա., Ընձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Երևան,2017:
3. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., էջ 22
4. Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978, с. 59
5. Я. Корчак, Избранные педагогические произведения, М., 1979, с.65